

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒ

### ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Մ. Յու. Լերմոնտովի ծննդյան 150-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը:

Բացելով նիստը, ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Հովնանը Լերմոնտովին բնութագրեց որպես մեծ հանճարի տեր մի ստեղծագործողի, որը գեղարվեստական խոսքի ու մտածողության վիթխարի ուժով դուրս եկավ իր ապրած պատմական ժամանակաշրջանից, հուժկու շարունակեց ապրել բոլոր ժամանակների, բոլոր ժողովուրդների, բոլոր սերունդների հետ: Կովկասի ժողովուրդները բացառիկ սեր են տածել դեպի Լերմոնտովը: Նա հայ ժողովրդի սիրած բանաստեղծն է: Նրա ստեղծագործությունները բաղմիցս թարգմանվել ու հրատարակվել են: Նրա երկերը ողբշնչման աղբյուր են եղել հայ արվեստագետների շատ սերունդների համար:

Ռոմանտիզմը և ռեալիզմը Լերմոնտովի ստեղծագործության մեջ թեև մայրով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու էդ. Ջրրաշյանը:

— Լերմոնտովի ստեղծագործության մեթոդի հարցը, — ասաց զեկուցողը, — պատկանում է դասական գրականության ամենաբարդ և հետաքրքիր պրոբլեմների թվին: Իրենց գաղափարական էությունը, կերպարներով ու ոճական հյուսվածքով ախպիկ ռոմանտիկական երկերի՝ «Գե» «Մծիրի» և ուրիշ պոեմների, դրամաների ու բանաստեղծությունների հեղինակը միաժամանակ ստեղծել է ռեալիստական մեծագույն ուժի գործեր՝ «Կալաշնիկովի երգը», «Տամբովի գանձապետուհին» պոեմները, «Բորոգինո», «Վալերիկ», «Հայրենիք» և շատ այլ բանաստեղծություններ ու, վերջապես, «Մեր ժամանակի հերոսը» լայնակտավ երկը, որը մինչև այժմ էլ մնում է համաշխարհային ռեալիստական արվեստի փայլուն նվաճումներից մեկը:

Ճիշտ է, անցյալ դարի 30-ական թվականներին, երբ գրում էր Լերմոնտովը, եվրոպական և ռուսական գրականության մեջ մի շարք խոշորագույն հեղինակներ աստիճանաբար կամ միանգամից անցում կատարեցին ռոմանտիզմից ռեալիզմին (Բալզակ, Ստենդալ, Գոգոլ և ուրիշներ), բայց եթե նույնիսկ Լերմոնտովի ստեղծագործությունը դիտենք այդ գրական անցման ֆոնի վրա, դարձյալ նրա դիրքը շատ ինքնատիպ է ու բացառիկ:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն տալով Լերմոնտովի ստեղծագործության տարրեր էտապների խորագրին վերլուծությունը, ցույց տվեց մեծ գրողի գրական մեթոդի շատ կարևոր առանձնահատկությունները:

Մի կողմից Լերմոնտովը XIX դարի առաջին կեսի հեղափոխական ռոմանտիզմի վերջին խոշորագույն դեմքն է, իսկ մյուս կողմից ռեալիստական շարժման կարևորագույն դեմքերից մեկը, որը Պուշկինի ու Գոգոլի հետ միասին արտահայտեց այդ շարժման ամենարևոտը գծերը: Լերմոնտովի գրական դիրքորոշման այդ բարդությունը պայմանավորված էր ոչ միայն նրա տաղանդի առանձնահատկություններով, այլև ժամանակի հասարակական ու գեղարվեստական հակասական պայմաններով:

Ջեկուցման մեջ մասնավորապես քննարկվեցին Լերմոնտովի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունները նրա գեղարվեստական զարգացման երկու հիմնական էտապներում՝ 1827—1836 և 1837—1841 թվականներին:

Եվ Լերմոնտովը և հայ գրականությունը թեմային էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Գանիբյանի զեկուցումը: Նա նշեց, որ Լերմոնտովը ոչ միայն ռուս ժողովրդի ազգային հպարտությունն է, այլ համաշխարհային ճանաչում ստացած պոեզիայի բարձրագագաթներից մեկը, որի անունը խրվածք դրվում է Գյոթեի, Շիլլեի, Բայրոնի անունների կողքին: Ջեկուցման հիմնական մասը նվիրված էր հայ դասական գրականության վրա թողած այն մեծ ազդեցությանը, ոչ ունեցել է Լերմոնտովի ստեղծագործությունը:

Մեջ բերելով Հովհ. Թումանյանի և Ա. Արփիարյանի ասույթները Լերմոնտովի ստեղծագործության մասին, զեկուցողն ավելացրեց:

Խորն է եղել Հերմոնտովի պոեզիայի պաշարաբանական բովանդակությունը և մեծ նրա ազատասիրական ոգին, որը շուրջ մեկ հարյուրամյակ եղել է մեր գրականության համար ներշնչանքների հզոր մի աղբյուր, բանի որ այդ պոեզիան համահունչ է եղել հայ ժողովրդի ազատասիրական նկրտումներին: Այդ պոեզիայի բարերար ազդեցությունն առկա է Մ. Նալբանդյանի բնագրային պոեզիայի, Շահազիզի թախտոտ մեղեդիների, Սպենգիարյանի եղերերգերի, Հովհաննիսյանի, Մատուրյանի, Բուսանյանի, Իսահակյանի, Չարենցի և մյուսների ստեղծագործություններում:

— Հերմոնտովի բանաստեղծական ժառանգությունը, — ասաց զեկուցողը, — դեռևս անցյալ դարի 40-ական թվականներին Լազարյան ճեմարանի սաներից մեկի՝ Համբարձում Համադասյանի շնորհիվ մտնում է մեր հոգևոր մշակութային մեջ: 1843 թ. նա հրատարակել է Հերմոնտովի «Եղերգ» և «Հրեշտակ» բանաստեղծությունները՝ գրաբար: Զեկուցողը հատկապես շեշտեց Համադասյանի կատարած թարգմանության նշանակությունը:

Մեծ է Հերմոնտովի ազդեցությունը սովետահայ պոեզիայի վրա: Ավ. Իսահակյանից սկսած մինչև մեր բանաստեղծների կրտսեր սերունդը միշտ էլ զգացել է նրա պոեզիայի հմայքը, խանդավառվել այդ պոեզիայի մեծարժեք հատկությամբ, նրա հերոսական ոգով, նվիրական գաղափարի համար խիզախելու հատկությամբ, ազատության գովերգմամբ ու նրա պարզ հայրենասիրությամբ:

\* \* \*

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ՀՍՍԻ ԳԱ Մ. Արեգյանի անվան գոտանության ինստիտուտի գիտական նստաշրջանը տեղի ունեցավ բանաստեղծի ծննդավայրում՝ Էջմիածնում:

Բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հովնանի բաղձնալից խոսքից հետո Հովհաննիսյանի պոեզիայի մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Հովսեփյանը: Բուսանյանի պոեզիայի պոետի չափածո ստեղծագործության ընդհանուր գծերը, զեկուցողը նշեց. որ ժողովրդական մեծատաղանդ բանաստեղծի ստեղծագործական խոշոր նվաճումները վճռապես կանխորոշեցին հայ պոեզիայի հետագա զարգացման ուղիները՝ ռեալիզմի և ժողովրդականության գրոշի ներքո, լստ ձևի և բովանդակության: Դա պատմականորեն նշանավորեց լիրիկայի զարգացման մի նոր աստիճան՝ ստեղծագործական մեթոդի էական վերափոխմամբ: Զեկուցողը ընդգծելով Հովհաննիսյանի պոեզիայի մեթոդը, ասաց, որ նա յուրաքանչյուր ուսանողի նվաճումները, այնուհետև անցում կատարեց զեկուցողի ռեալիզմի:

«Հ. Հովհաննիսյանը և համաշխարհային գրականությունը» թեմայի մասին զեկուցեց գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Նշան Մուրադյանը:

Դասաւան կոթուծյան տեր մի մարդ. — ասաց զեկուցողը, — որ տիրապետել է հին և նոր լեզուների, թարգմանել անմիջապես ութ լեզուից: Նա հիմնավորապես ծանոթ է եղել համաշխարհային գրականությանը:

Երկու հիմնական քննադատներում է արտահայտվել Հովհաննիսյանի կապը եվրոպական գրականության հետ. թարգմանական արվեստի և առանձին խնդիրների ու գրողների մասին դրված հոգվածների կամ ուսումնասիրությունների մեջ: Զեկուցողը ներկայացրեց նաև անտիկ, եվրոպական և ռուսական գրականությունից Հովհաննիսյանի կատարած թարգմանություններն ու շեշտեց հատկապես այն մեծ ծառայությունը, որ կատարել է նա հայ թարգմանական գրականության մեջ, կանգ առնելով բանաստեղծի թատերախոսական հոգվածների վրա, որոնք լուրջ ներդրում են մեր թատերական քննադատության մեջ:

Ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ս. Ամիրյանի զեկուցումը նվիրված էր հայ և ուկրաինացի երկու մեծ բանաստեղծների՝ Հ. Հովհաննիսյանի և Պավլո Տիչինայի բարեկամությանը: Պ. Տիչինան հայ պոեզիային սկզբում ծանոթացել է ռուսերենի միջոցով, ապա սովորել հայերեն ու թարգմանություններ է կատարել ընդգրկելով: 1927 թ. Պ. Տիչինան առաջին անգամ թարգմանում է Հովհաննիսյանի «Հատիկ» բանաստեղծությունը: Այնուհետև իրար ետևից լույս են տեսնում «Այսպիսի, բարձր սարին», «Սարն ի վեր», «Այ վարդ աղջիկ», Պ. Տիչինան Հովհաննիսյանի պոեզիայում գտավ կերպարների, ապրումների իրեն իսկ հոգեհարազատ ու սրտամտ մի ամբողջ աշխարհ: Երկու քննադատների համար էլ հիմնական ներշնչանքի աղբյուր եղել է ժողովուրդը, երկուսի քննադատությունն էլ մեծ տեղ է զբաղում հայրենի բնությունն ու բնաշխարհը:

Գրականության և արվեստի թանգարանի ձևազրատան վարիչ Գ. Ազնավուրյանի՝ «Հ. Հովհաննիսյանի անհայտ գրական ժառանգության հետքերով» զեկուցման նպատակն էր ցույց տալ բանաստեղծի՝ սրբերական մամուլում եղած բազմաթիվ անստորագիր և ծածկանուններով հղվածները, գրախոսականները, թատերախոսականները, որոնց հայտնաբերումը խիստ անհրաժեշտ է գրողի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության համար:

Հ. Հովհաննիսյանի կյանքի և գրական-հասարակական գործունեության մի դրվագի՝ Բարձի գործունեության համարյա քիչ ուսումնասիրված շրջանի մասին զեկուցեց բանաստեղծի դուստր Ա. Հովհաննիսյանը:

Վերջում ողջունի ճառով հանդես եկավ ուկրաինացի բանաստեղծ Վ. Կոչևսկին:

Ձ. ՄԵՐՉԱԿԵԿՅԱՆ: